

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԶԵՎԱՐԱՆԱԿԱՆ
ԶՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Ե. ԱՍԱՏՐՅԱՆ

Արևելահայերենը և արևմտահայերենը, փոխադարձորեն հասկանալի լեզուներ լինելով հանդերձ, որը վկայում է նրանց ակունքների ընդհանրության մասին, միևնույն ժամանակ երևան են հանում նաև որոշակի բառապաշարային, հնչյունական և ձևաբանական տարբերություններ, որոնք զլխավորապես բացատրվում են մեր երկու գրական լեզուների բարբառային հիմքերով (Արարատյան և Պոլսի բարբառներ), մասնակիորեն՝ նաև գրաբարի տարբեր ազդեցություններով նրանց մշակման վրա: Ստորև ներկայացվում են արևելահայերենի ու արևմտահայերենի գոյականի հոլովների ու հոլովումների և հոգերի զուգաբանությունները:

ՀՈՒՈՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արևելահայերենում գոյական անուններն ունեն 5 հոլով՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական, իսկ արևմտահայերենում՝ 4 հոլով՝ ուղղական, տրական, բացառական և գործիական. բացակայում է ներգոյական հոլովը: Հոլովական համակարգի այս տարբերությունը բացատրվում է մեր երկու գրական լեզուների բարբառային հիմքերով, նրանով, որ արևելյան բարբառներում մեր լեզվի հետգրաբարյան զարգացման ընթացքում առաջացել է մի նոր հոլով՝ ներգոյական հոլով, որը բացակայում է արևմրտյան բարբառներում:

Բացի հոլովական համակարգի այս հիմնական ու էական տարբերությունից, երկու գրական լեզուները առանձնահատկություններ են երևան հանում առանձին հոլովների կազմության ու կիրառության մեջ և հոլովումների համակարգում:

Ուղղական հոլով.— Երկու գրական լեզուներում էլ ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է՝ հոլովական զրո վերջավորությամբ, ինչպես՝ քառ, տուն, աշակերտ, մառդ, ուսուցիչ և այլն:

Կիրառական տեսակետից արևելահայերենի և արևմտահայերենի ուղղականները իրարից տարբերվում են հետևյալ կետերում:

1. Արևմտահայերենում անձի ու իրի առման քերականական կարգը բացակայում է, և ուղիղ խնդիրը անձերի անունների դեպքում ևս արտահայտվում է ուղղականով՝ արևելահայերենի տրականի փոխարեն, օրինակ՝ Պետրոսը կը սիրէ Վարդանը||Պետրոսը սիրում է Վարդանին. Տեսայ անոր եղբայրը, քոյրը, ընկերը||Տեսա նրա եղբորը, քոյրը, ընկերոջը. Հրապիրեցի ուսուցիչը, վաճառականը, բժիշկը, խանութպանը||Հրապիրեցի ուսուցչին, վաճառականին, բժշկին, խանութպանին:

2. Արևմտահայերենի ուղղականը արտահայտում է նաև արևելահայերենի ներգոյական հոլովի իմաստը՝ հանդես գալով տեղի պարագայի շարահյուսական պաշտոնով, օրինակ՝ Տիգրան կաշխատէր դարբնոցը||Տիգրանը աշխատում էր դարբնոցում. Արամ ծնած էր Վան||Արամը ծնվել էր Վանում. Վարդան կլբնակի Բաղաբը||Վարդանը բնակվում է քաղաքում:

Տրական հոլով. — Մի կողմ թողած արևելահայերենի և արևմտահայերենի տրական հոլովների կազմության առանձին տարբերությունները, որոնք կներկայացվեն հոլովումները քննարկելիս, պետք է նշել, որ դրանք իրարից տարբերվում են հոդառության տեսակետից, որն արտահայտվում է նրանում, որ արևմտահայերենում տրականը հատկացուցչի պաշտոնում (սեռական), երբ որոշյալ է, որոշիչ հոդ է ստանում, իսկ արևելահայերենում չի ստանում, ինչպես՝ այս ծառին ճիւղը||այս ծառի ճյուղը. Արամին աղջիկը||Արամի աղջիկը. մեր ուսուցիչներուն խօսքերը||մեր ուսուցիչների խոսքերը. Երևանին փողոցները||Երևանի փողոցները. մեր գրադարանին ընթերցասրահը||մեր գրադարանի ընթերցասրահը:

Հոդառության այս տարբերությունը արդյունք է մեր գրական լեզուների բարբառային տարբեր հիմքերի:

Բացառական հոլով. — Բացառական հոլովն արևելահայերենում կազմվում է իՅ և ՈՒՅ վերջավորություններով, ինչպես՝ քար— Բարից, ծառ—ծառից, գինի—գինուց, քամի— Բամուց, իսկ արևմտահայերենում՝ է վերջավորությանը՝ քար— Բարէ, ծառ—ծառէ, գինի—գինիէ, քամի— Բամիէ: Վերջինումս կա նաև Մէ ձևով բացառական, ինչպես՝ մօրմէ, եղբօրմէ, հօրմէ, կնոջմէ: Բացառականի կազմության այս տարբերությունը ևս գալիս է մեր գրական լեզուների բարբառային հիմքերից:

Նշելի է նաև այն, որ բացառական հոլովն արևմտահայերենում որոշյալ առման դեպքում որոշիչ հոդ է ստանում, իսկ արևելահայերենում, որպես կանոն, չի ստանում: Այսպիսով, երկու գրական լեզուներում ստացվում են հացէն||հացից, Բարէն||Բարից, փողոցէն||փողոցից և այլ զուգաբանությունները:

Արևելահայերենի և արևմտահայերենի բացառականները կիրառական-շարահյուսական էական տարբերություններ երևան շեն հանում:

Գործիական հոլով. — Գործիական հոլովն արևելահայ գրական լեզվում կազմվում է ՈՎ և Բ վերջավորություններով, ըստ որում, Բ վերջավորությունն են ստանում ՈՒԹՅՈՒՆ և ՈՒՄ ածանցներով կազմված բառերը, իսկ ՈՎ վերջավորությունը՝ մյուսները, ինչպես՝ քար— Բարով, սար— Բարով, աշակերտ— աշակերտով, փողոց— փողոցով, պետություն— պետությամբ, մեծություն— մեծությամբ, ծագում— ծագմամբ, կատարում— կատարմամբ և այլն:

Արևմտահայերենում ևս գործիական հոլովը կազմվում է ՈՎ և Բ վերջավորություններով՝ միայն այն տարբերությամբ, որ վերջինումս Բ վերջավորությանը գործիական հոլով կարող են կազմել միայն ՈՒԹԻՒՆ (ություն) ածանցն ունեցող բառերը՝ պետութիւն— պետութեամբ, մեծութիւն— մեծութեամբ, զուարթութիւն— զուարթութեամբ և այլն:

Արևելահայերենում ՈՒՄ ածանցով կազմված բառերի գործիականը լինում է Բ և ՈՎ ձևերով՝ կատարմամբ— կատարումով, ցասմամբ— ցասումով, ծագմամբ— ծագումով և այլն, իսկ արևմտահայերենում՝ միայն ՈՎ ձևով՝ կատարումով, ցասումով, ծագումով:

Նշելի է նաև այն, որ արևմտահայերենում գործիական հոլովը որոշ բառերի դեպքում հանդես է գալիս ՄՈՎ ձևով, օրինակ՝ Բոջմով, եղբօրմով, հօրմով, Աստուծով և այլն:

Արևմտահայ լեզվում, որպես հնաբանություն, որոշ բառերի մեջ հանդես

է գալիս նաև գրաբարյան գործիականի ԱԻ մասնիկը, օրինակ՝ պատճառ—պատճառաւ, միջոց—միջոցաւ:

Արևելահայերենի և արևմտահայերենի գործիականները որոշ շահով տարբերվում են նաև հոդառությամբ, որն արտահայտվում է նրանում, որ առաջինում գործիական հոլովը, որպես կանոն, որոշիչ հոդ չի ստանում, իսկ երկրորդում կարող է ստանալ:

Իմաստային տեսակետից արևելահայերենի և արևմտահայերենի գործիական հոլովները տարբերություններ երևան չեն հանում և կիրառվում են նույն շարահյուսական պաշտոններով:

Ներգոյական հոլով.— Ինչպես նշված է արդեն, ներգոյական հոլովը հատուկ է միայն արևելահայերենին և կազմվում է ՈՒՄ մասնիկով, ինչպես՝ սարում, փողոցում, դպրոցում, դասարանում, գյուղում, ֆաղաֆում և այլն: Որպես կանոն, ներգոյական հոլով չեն կազմում անձերի ու կենդանիների հատուկ ու հասարակ անունները, վերացական գոյականները և բազմաթիվ սովորական բառեր, որոնք տեղի հասկացություն չեն արտահայտում կամ տեղի հասկացության հետ չեն շաղկապվում: Այսպիսի բառերի ներգոյականի իմաստն արտահայտվում է տրականով և ՄԵՁ կապով, օրինակ՝ աշակերտի մեջ, բանվորի մեջ, Արամի մեջ, ծագման մեջ, զվարթության մեջ և այլն:

Արևմտահայերենում ներգոյականի իմաստն արտահայտվում է.

ա) Տրականով և ՄԵՁ կապով, օրինակ՝ Փողոցներուն մէջ աշխոյժ եռուզեռ կար. Ջուրին մէջ կը լողանային մանուկները. Օդին մէջ կը զգացուէր գարնան շունչը. Ան սրտին մէջ կատէր Ատոմը:

բ) Ուղղական հոլովով, օրինակ՝ Կիրճին խորքը, Ժայռին ծոցն է գիւղանկարը փռուած. Գիշերը մնացի Ծապլվար գիւղը. Արամ կաշխատէր՝ գործատունը. Աշոտ ծնած էր էջմիածին. Ան կը բնակէր ֆաղաֆը և այլն:

ՀՈՒՆՈՎՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բոլոր բառերը միատեսակ չեն հոլովվում: Բառերի տարբեր խմբեր, կապված դրանց ձևային, իմաստային, պատմական և այլ առանձնահատկությունների հետ, հոլովական ձևերի կազմության ինչ-ինչ առանձնահատկություններ են երևան բերում: Այդ առանձնահատկությունները ցայտուն ձևով հանդես են գալիս տրական հոլովում, ինչպես՝ քար—ֆարի, մարդ—մարդու, օր—օրվա, ծագում—ծագման, պետություն—պետության և այլն: Հստ տրական հոլովի այս ձևավորումների էլ հայերենում տարբերակվում են Ի, ՈՒ, ՎԱ, ԱՆ և այլ հոլովումներ:

Հայերենի հոլովական ձևերը կազմվում են երեք կերպ.

ա) Բառի վրա հոլովական վերջավորությունների ավելացմամբ, օրինակ՝ քար—ֆարի, գրել—գրելու, օր—օրվա, ընկեր—ընկերոջ:

բ) Բառի վերջնահնչյուն ձայնավորի կամ բաղաձայնի փոփոխությամբ, օրինակ՝ ոսկի—ոսկու, Գրիգորենք—Գրիգորենց:

Այս երկու տիպերը միասին կոչվում են արտաքին թեքում:

գ) Բառամիջի ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությամբ, օրինակ՝ տուն—տան, հայր—հոր: Այս տիպը կոչվում է ներքին թեքում:

Հոլովումների համակարգում ունենալով զգալի ընդհանրություններ՝ արևելահայերենն ու արևմտահայերենը երևան են հանում նաև որոշակի տարբերություններ: Նպատակահարմար է համակարգը ներկայացնել ըստ եզակի և հոգնակի հոլովումների:

Ի հոլովում.— Ի հոլովումը եզակի թվում երկու գրական լեզուներում էլ ընդհանրական կամ հասարակ հոլովում է, որովհետև նրա ընդգրկման սահմանները շեն կարող բնութագրվել ո՛չ ձևային, ո՛չ իմաստային, ո՛չ պատմական և ո՛չ էլ մի որևէ այլ հատկանիշով: Եվ արևելահայերենում, և արևմտահայերենում տրական հոլովում Ի վերջավորութունն են ստանում գոյականների բացարձակ մեծամասնությունը, այլև գոյականաբար գործածված ածականները, թվականները, հարակատար ու ենթակայական դերբայները:

Այս հոլովման ընդհանուր պատկերը արևելահայերենում և արևմտահայերենում հետևյալն է:

Արևելահայերեն		Արևմտահայերեն
Ուղղ.	սար	սար
Տր.	սարի	սարի
Բաց.	սարից	սարէ
Կործ.	սարով	սարով
Ներգ.	սարում	—

Արևմտահայերենում Ի հոլովման ընդգրկման ոլորտը եզակի թվում արեւելահայերենից ավելի լայն է, քանի որ արևմտահայերենում Ի ձևով են հոլովվում նաև Ի-ով վերջացող բառերը՝ գինի—գինիի, ոսկի—ոսկիի, հոգի—հոգիի, ապակի—ապակիի, աշակերտուհի—աշակերտուհիի և այլն, որոնք արեւելահայերենում հոլովվում են ՈՒ ձևով՝ գինի—գինու, ոսկի—ոսկու, հոգի—հոգու և այլն:

Ի-ով վերջացող բառերի հոլովման ընդհանուր պատկերը երկու գրական լեզուներում հետևյալն է:

Արևելահայերեն		Արևմտահայերեն
Ուղղ.	հոգի	հոգի
Տր.	հոգու	հոգիի
Բաց.	հոգուց	հոգիէ
Կործ.	հոգով	հոգիով
Ներգ.	հոգում	—

ՈՒ հոլովում.— Արևելահայերենում ՈՒ ձևով հոլովվում են.

ա) Ի-ով վերջացող բառերը՝ հոգի—հոգու, որդի—որդու, ոսկի—ոսկու, պատանի—պատանու, քամի—քամու, քաղաքացի—քաղաքացու, ընկերուհի—ընկերուհու և այլն:

բ) Թուր բայերի անորոշ դերբայները՝ գրել—գրելու, կատարել—կատարելու, վազել—վազելու, կարդալ—կարդալու, խաղալ—խաղալու, զգալ—զգալու և այլն:

գ) Ամուսին—ամուսնու, անկողին—անկողնու, մարդ—մարդու, Աստված—Աստծու բառերը:

Արևմտահայերենում ևս համակարգային ձևով ՈՒ հոլովման ենթարկվում են անորոշ դերբայները՝ գրել—գրելու, կարդալ—կարդալու, խնդալ—խնդալու և այլն, ըստ որում Ի՛լ և ՈՒ՛լ լծորդութունները հոլովման ժամանակ փոխվում են Ե՛լ-ի, օրինակ՝ յօգնիլ—յօգնելու, թռչիլ—թռչելու, թողուլ—թողելու, շրօսնուլ—զրօսնելու և այլն:

ՈՒ հոլովման ընդգրկման ոլորտի տեսակետից արևելահայերենի և արևմտահայերենի հիմնական տարբերությունն այն է, որ՝ արևմտահայերենում,

ինչպես նշված է արդեն, Ի-ով վերջավորվող բառերը պատկանում են ոչ թե ՌԻ, այլ Ի հոլովման՝ հոգի-հոգիի, ոսկի-ոսկիի, քամի- փամիի և այլն:

Իրան հակառակ՝ արևմտահայերենում ՌԻ ձևով են հոլովվում մի շարք սովորական միավանկ բառեր, որոնք արևելահայերենում, որպես կանոն, ենթարկվում են Ի հոլովման: Այդ բառերը մոտավորապես հետևյալներն են. մառդ (արևելահայերենում ևս հոլովվում է ՌԻ ձևով), հայ, կով, ծով, հալ, նալ, հով, պապ, շահ, մահ, Ջին (Չինաստան), այգ, ժամ, էջ, թի, ձի (վերջին երկուսը արևելահայերենում ևս հոլովվում են ՌԻ ձևով), արջ, գահ, պահ, մանչ, դար: Սակայն սրանցից մի քանիսը կարող են հոլովվել նաև Ի ձևով, օրինակ՝ գահու||գահի, հովու||հովի, նաու||նաի, ծովու||ծովի, շահու||Շահի (երբ նշանակում է Պարսկաստանի վեհապետը), պապու||պապի (երբ նշանակում է Հռոմի պապը):

Որպես կանոն, ՌԻ ձևով են հոլովվում նաև դրանցով կազմված բաղադրյալ բառերը, օրինակ՝ ոսկեդար—ոսկեդարու, ռուսահայ—ռուսահայու, շնդկաչին—շնդկաչինու, բայց՝ շոգենալ—շոգենալի, հնդկահալ—հնդկահալի և այլն:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ արևմտահայերենում ՌԻ ձևով կարող են հոլովվել նաև գլուխ—գլխու, տղայ—տղու, արև—արևու, ճամբայ—ճամբու, շաբաթ—շաբթու, ամիս— ամսու բառերը:

Այս շարադրանքից կարելի է նկատել, որ արևմտահայերենում ՌԻ հոլովման ընդգրկման ոլորտը զգալի շափով տարբերվում է արևելահայերենից: Քանի որ Ի-ով վերջավորվող բառերն արևմտահայերենում ենթարկվում են Ի և ոչ թե ՌԻ հոլովման, դրանից կարող է այն տպավորություն ստեղծվել, թե արևմտահայերենում ՌԻ հոլովման ընդգրկման ոլորտն արևելահայերենից ավելի նեղ է: Բայց իրականում այդպես չէ, որովհետև արևմտահայերենում ՌԻ հոլովման են պատկանում հոգնակի թիվը ԵՐ և ՆԵՐ ձևերով կազմող բոլոր բառերը, ինչպես՝ սարեր—սարերու, քարեր—փարերու, փողոցներ—փողոցներու, աշակերտներ—աշակերտներու և այլն, որոնք արևելահայերենում հոլովվում են Ի ձևով՝ սարեր—սարերի, փողոցներ—փողոցների և այլն:

ՎԱ||ՌԻԱՆ հոլովում.— Ժամանակ ցույց տվող բառերի տրական հոլովը արևելահայերենում կաղմվում է ՎԱ, իսկ արևմտահայերենում ՌԻԱՆ (վան) վերջավորությամբ, ինչպես՝ օր—օրվա||օրուան, շաբաթ—շաբաթվա||շաբաթուան, գիշեր—գիշերվա||գիշերուան, իրիկուն—իրիկվա||իրիկուան և այլն:

Արևելահայերենում և արևմտահայերենում ՎԱ||ՌԻԱՆ ձևերով հոլովվում են մոտավորապես հետևյալ բառերը. օր, այսօր կեսօր||կէսօր, շաբաթ, ամիս, տարի (տարվա||տարուան), ցերեկ||ցուրեկ, գիշեր, առավոտ||առտու (առավոտվա||առտուան), իրիկուն (իրիկվա||իրիկուան), վաղը (վաղվա||վաղուան), ամառ, ձմեռ, հերու (հերվա||հերուան), ժամանակ, ատեն (միայն արևմտահայերեն), հիմա—հիմիկ (հիմիկվա||հիմիկուան), անգամ, առաջ, երբ:

Հոլովման այս տիպին հետևող շատ բառերի տրականը կարող է կազմվել սովորական Ի ձևով, օրինակ՝ օրի, կեսօրի, շաբաթի, գիշերի, ցերեկի||ցուրեկի, ժամանակի, անգամի և այլն:

Ժամանակ ցույց տվող բառերի բացառականը արևելահայերենում լինում է ԻՑ կամ ՎԱՆԻՑ ձևերով, ինչպես՝ օրից||օրվանից, գիշերից||գիշերվանից, ցերեկից||ցերեկվանից, շաբաթից||շաբաթվանից և այլն:

Արևմտահայերենում շաբաթ, ամիս, կէսօր, ատեն, ժամանակ, անգամ բառերի բացառականը, որպես կանոն, գործածվում է է վերջավորությամբ՝ շաբաթէ, ամիսէ, կէսօրէ, ատենէ: Մյուսների բացառականը կարող է կազմվել և՛ է, և՛ ՌԻԸՆԷ (վրնէ) ձևերով, ինչպես՝ օրէ||օրուրնէ, ցուրեկէ||ցուրեկուրնէ, տարիէ||տարուրնէ և այլն:

Այսպիսով, ՎԱ||ՌԻԱՆ հոլովման ընդհանուր պատկերը հետևյալն է:

Արևելահայերեն

Արևմտահայերեն

Ուղղ.	օր	օր
Տր.	օրվա	օրուան
Բաց.	օրից օրվանից	օրէ օրուրնէ
Գործ.	օրով	օրով
Ներգ.	օրում	—

Ինչպես կարելի է նկատել, ՎԱ||ՌԻԱՆ հոլովման տեսակետից արևելահայերենը և արևմտահայերենը, եթե հաշվի չառնենք բացառականի կազմութիւնը, երևան են հանում մի հիմնական տարբերութիւն, այն է՝ արևմտահայերենի ՌԻԱՆ (վան) ձևի փոխարեն արևելահայերենն ունի ՎԱ ձևը: Դա պատմականորեն առաջացել է ՌԻԱՆ ձևից, որի վերջնահնչյուն ն-ն ընկել է՝ ըմբռնվելով որպես որոշիչ հոդ:

Ան նոլովում.— Արևելահայերենում ԱՆ հոլովման պատկանում են.

ա) ՌԻՄ (գրբ. ումն) ածանցով կազմված բայանունները՝ ծագում—ծագման, որոշում—որոշման, կատարում—կատարման, ցասում—ցասման, բորբոքում—բորբոքման և այլն:

բ) Գրաբարում ն վերջնահնչյուն ունեցող հետևյալ միավանկ բառերը. բեռ—բեռան, գառ—գառան, դուռ—դրան, եզ—եզան, թոռ—թռան, նուռ—նռան, ձուկ—ձկան, մուկ—մկան, լեռ—լեռան, կուռ—կռան, ծունկ—ծնկան, ծոռ—ծռան:

գ) Գարուն—գարնան, ամառ—ամռան, աշուն—աշնան, ձմեռ—ձմռան բառերը:

դ) Մանուկ—մանկան հասարակ գոյականը: Մանուկ հատուկ անունը ենթարկվում է Ի հոլովման՝ Մանուկի:

Արևելահայերենում ՌԻՄ ածանցով կազմված բայանուններն ընդհանրապես և զրաբարում ն վերջնահնչյուն ունեցող միավանկ բառերի մի զգալի մասը տրական հոլով կարող է կազմել նաև Ի ձևով, ինչպես՝ ցասում—ցասման||ցասումի, ծագում—ծագման||ծագումի, ուսում—ուսման||ուսումի, բեռ—բեռան||բեռի, եզ—եզան||եզի, թոռ—թռան||թռի, ծունկ—ծնկան||ծնկի և այլն:

Արևմտահայերենում ԱՆ հոլովման պատկանում են.

ա) ՌԻՄ ածանցով կազմված բայանունները՝ ուսում—ուսման, ծագում—ծագման, ցասում—ցասման, կատարում—կատարման, որոնք, ինչպես արևելահայերենում է, կարող են հոլովվել նաև Ի ձևով՝ ուսումի, ծագումի, ցասումի, կատարումի:

բ) էրիկ—էրկան, մանուկ—մանկան, կնիկ—կնկան, աղջիկ—աղջկան (վերջին երկուսն արևելահայերենում հոլովվում են Ա ձևով՝ կնկա, աղջկա), լեռ—լեռան (լեռան), դուռ—դրան (դրան), բեռ—բեռան, թոռ—թռան բառերը, որոնք, բացի աղջիկ, էրիկ և կնիկ բառերից, կարող են հոլովվել նաև Ի ձևով՝ մանուկի, դուրի, բեռի և այլն:

գ) Աշուն—աշնան, գարուն—գարնան բառերը, բայց դրանց տրականի Ի-ով կազմված ձևերը՝ աշունի, գարունի, ավելի տարածված են ու նախընտրելի:

Ինչպես կարելի է եզրակացնել այս շարադրանքից, ԱՆ հոլովման ընդգրկման տեսակետից արևելահայերենը և արևմտահայերենը շնչին տարբերութիւններ են երևան հանում: Միայն պետք է նկատի ունենալ, որ արևելահայերենում ՌԻՄ ածանցով կազմված բայանունների գործիականը լինում է ՈՎ և Բ ձևերով՝ ծագումով||ծագմամբ, ցասումով||ցասմամբ, կատարումով||կատարմամբ և այլն, իսկ արևմտահայերենում՝ միայն ՈՎ ձևով՝ ծագումով, ցասումով, կատարումով:

Ստորև տրվում են ԱՆ հոլովման նմուշներ:

Արևելահայերեն

Արևմտահայերեն

Ուղղ.	ծագում	թոռ	ծագում	թոռ
Տր.	ձագման	թոռան	ծագման	թոռան
Բաց.	ծագումից	թոռից	ծագումէ	թոռէ
Գործ.	ծագումով	թոռով	ծագումով	թոռով
	ծագմամբ			
Ներգ.	—	—	—	—

Ինչպես տեսնում ենք, Ան հոլովման հարցում արևելահայերենը և արևմտահայերենը ընդհանրանում են նաև նրանով, որ արևելահայերենում ևս Ան հոլովման բառերը, որպես կանոն, ներգոյական հոլով չեն կազմում:

ՈՋ հոլովում.— Արևելահայերենում և արևմտահայերենում ՈՋ ձևով հոլովվում են սահավաթիվ բառեր, այն է՝ փույր||փոյր, կիճ, տալ, աներ, տեգր||տագր, սկեսուր, տեր||տէր, րնկեր և սրանցով բարդված այլ բառեր, երբ սրբանք բարդության երկրորդ բաղադրիչ են, օրինակ՝ հուրափույր, դասընկեր, տանտեր և այլն: Արևելահայերենում սրանց բացառականը և գործիականը կազմվում են սովորական ԻՅ, ՈՎ, իսկ արևմտահայերենում՝ Մէ, ՄՈՎ վերջավորություններով, որոնք երկու գրական լեզուներում էլ դրվում են տրականի ձևի վրա: Այս հոլովման բառերը արևելահայերենում ևս, որպես կանոն, ներգոյական հոլով չեն կազմում: Ահա այս բառերի հոլովման ընդհանուր պատկերը:

Արևելահայերեն

Արևմտահայերեն

Ուղղ.	քույր	քոյր
Տր.	քրոջ	քրոջ
Բաց.	քրոջից	քրոջմէ
Գործ.	քրոջով	քրոջմով
Ներգ.	—	—

Արտափն Ո||ՈՅ հոլովում.— Արևելահայերենում Ո ձևով է հոլովվում սեր—սիրո բառը: Երբեմն տրականում Ո վերջավորությունն են ստանում հույս, լույս, սուգ, պատիվ, հուր բառերը՝ հուսո, լուսո, սգո, պատվո, հրո, բայց այս ձևերը սոսկ հնաբանությունների արժեք ունեն, և դրանց կենդանի ու կանոնավոր հոլովական ձևերն են՝ հույսի, լույսի, սգի, պատվի, հրի:

Արևմտահայերենում Ո (մեր հին ուղղագրությանը համապատասխան գրվում է ոյ) հոլովման ոլորտը այս կամ այն շափով լայն է: Արևմտահայ գրական լեզվում Ո ձևով հոլովվում են.

ա) Սէր—սիրոյ, Աստուած—Աստուածոյ, Կ. Պոլիս—Կ. Պոլսոյ. նաև Տարօն—Տարօնոյ, Կարիւն—Կարւնոյ բառերը:

բ) ԻԱ վերջավորվող օտարազգի հատուկ տեղանունները, օրինակ՝ Ասիա—Ասիոյ, Իտալիա—Իտալիոյ, Եդեսիա—Եդեսիոյ, Եդոկիա—Եդոկիոյ, Գերմանիա—Գերմանիոյ և այլն: Պետք է նշել, որ ԻԱ վերջավորվող անձնանունները հոլովվում են Ի ձևով, օրինակ՝ Արաֆսիա—Արաֆսիայի, Եդիա—Եդիայի և այլն:

Պատմական տեղեկության կարգով նշենք, որ գրաբարում Ի-ով վերջացող բառերի սեռական-տրական հոլովը կազմվում էր ՈՅ ձևով և ուղղականի Ի վերջահանչյունը Ի-ի փոխվելով, ինչպես՝ հոգի—հոգւոյ, զինի—զինւոյ, որդի—որդւոյ և այլն: Այս ձևերը բարբառներում, որպես կանոն, դարձել են ՈԻ՝ հոգու, զինու, որդու: Ի-ով վերջավորվող բառերի այս ՈԻ հոլովումն էլ անցել է արևելահայերենին: Իսկ ինչ վերաբերում է արևմտահայերենին, ապա վերջինումս այս բառերի համար մի ժամանակ գործածվեց գրաբարյան ԻՈՅ ձևը՝

հոգւոյ, գիւնոյ, որդւոյ, որոնք որպէս հնաբանութիւններ հետագայում տեղի տվեցին ի հոլովմանը՝ հոգիի, գիւնիի, որդիի:

Ներքին Ո՛Յ հոլովում.— Այս հոլովման տրականը արեւլահայերենում և արեւմտահայերենում կազմվում է ուղղականի ԱՅ երկհնչյունը (երկբարբառը) Ո՛Յ-ի փոխելով, ինչպէս՝ հայր—հոր||հօր, մայր—մոր||մօր, եղբայր—եղբոր|| եղբօր: Այսպէս են հոլովվում բերված բառերը, այլև այն բաղադրյալ բառերը, որոնց վերջին բաղադրիչները սրանք են, ինչպէս՝ վաճառայր, կնամայր, տիրամայր, կնամայր, հորեղբայր, մորեղբայր և այլն:

Այս հոլովման բառերի բացառականը և գործիականը արեւլահայերենում կազմվում է սովորական իՅ և Ո՛Վ, իսկ արեւմտահայերենում՝ Մէ, ՄՈ՛Վ վերջավորութիւններով:

Արեւլահայերեն		Արեւմտահայերեն
Ուղղ.	հայր	հայր
Տր.	հոր	հօր
Բաց.	հորից	հօրմէ
Գործ.	հորով	հօրմով
Ներգ.	—	—

Ներքին Ա հոլովում.— Արեւլահայերենում Ա ներքին հոլովման պատկանում են.

ա) ՈՒԹՅՈՒՆ ածանցով կազմված գոյականները՝ լավութիւն—լավության, սևութիւն—սևության, պետութիւն—պետության, մեծութիւն, գիտութիւն, բանվորութիւն և այլն, որոնք շատ մեծ թիվ են կազմում:

բ) ՈՒՆ վերջնահնչյունն ունեցող շուն—շան, տուն—տան, սյուն—սյան, ձյուն—ձյան, անկյուն—անկյան, արշուն—արշան բառերը, որոնք, բացի առաջին երկուսից, հոլովվում են նաև ի ձևով՝ սյուն—սյունի, ձյուն—ձյունի և այլն:

Անուն բառը ևս ենթարկվում է Ա ներքին հոլովման՝ անուն—անուան ձևով: Չայնավորից առաջ ՈՒ>Վ հնչյունափոխութեամբ այս բառի տրականի համար առաջացել է անվան ձևը: Այս բառի մեջ առկա է ոչ թե ՈՒ>Ա, այլ Օ>Ա հերթագայութիւնը:

Արեւմտահայերենում Ա ներքին հոլովմամբ հոլովվում են.

ա) ՈՒԹԻՒՆ (արտասանվում է ություն) ածանցով կազմված գոյականները, որոնց տրական հոլովը լինում է ՈՒԹԵԱՆ (արտասանվում է ության), ինչպէս՝ լաւութիւն—լաւութեան, մեծութիւն—մեծութեան, գիտութիւն—գիտութեան գուարթութիւն—գուարթութեան և այլն:

բ) Տուն—տան և շուն—շան բառերը: Արեւմտահայերենում ձիւն, սիւն, արիւն, անկիւն բառերը պատկանում են ի հոլովման:

Ինչպէս կարելի է նկատել, արեւլահայերենի ՈՒԹՅՈՒՆ և արեւմտահայերենի ՈՒԹԻՒՆ ածանցով կազմված բառերի տրականը հնչյունական տեսակետից նույն ձևն ունի: Երկու գրական լեզուները այս հարցում իրարից չտարբերվում են միայն ուղղագրական տեսակետից:

Սակայն տարբեր է այս ածանցն ունեցող բառերի բացառականի կազմութիւնը: Արեւլահայերենում ՈՒԹՅՈՒՆ ածանցն ունեցող բառերի բացառական կազմվում է իՅ վերջավորութեամբ, որը դրվում է ուղղականի ձևի վրա, ինչպէս՝ լավութիւն—լավութիւնից, մեծութիւն—մեծութիւնից, պետութիւն—պետութիւնից և այլն, իսկ արեւմտահայերենում կազմվում է է վերջավորութեամբ, որը դրվում է տրականի ձևի վրա, ըստ որում, տրականի ԵԱ ձևը հնչյունափոխվելով՝ դառնում է Ե, ինչպէս՝ լաւութիւն—լաւութեան—լաւութեանէ, մեծութիւն—մեծութեան—մեծութեանէ, պետութիւն—պետութեան—պետութեանէ և այլն:

Գործիական հոլովը երկու գրական լեզուներում էլ, որպես կանոն, կազմվում է Բ վերջավորութամբ, որը դրվում է տրականի ձևի վրա, ըստ որում, Բ վերջավորությունից առաջ ն հնչյունը վերածվում է Մ-ի, ինչպես՝ լավութուն||լատութին—լավության||լատութեան—լավութամբ||լատութեամբ, մեծութուն||մեծութին—մեծության||մեծութեան—մեծութեամբ||մեծութեամբ և այլն: Այս տարբերությունը ևս սոսկ ուղղագրական տարբերություն է: Ըստ հնչման դրանք նույնն են:

Այսպիսով, ՈՒԹՅՈՒՆ||ՈՒԹԻՒՆ ածանցով կազմված բառերի հոլովման պատկերը հետևյալն է:

Արևելահայերեն		Արևմտահայերեն
Ուղղ.	մեծութուն	մեծութին
Տր.	մեծության	մեծութեան
Բաց.	մեծութունից	մեծութենէ
Գործ.	մեծութամբ	մեծութեամբ

Սակայն պետք է նկատի ունենալ, որ և՛ արևելահայերենի, և՛ արևմտահայերենի ժողովրդական-խոսակցական ոճերում այսպիսի բառերի գործիականը կազմվում է սովորական ՈՎ վերջավորությամբ:

Տրականի կազմության այլ ձևեր.— Ե՛վ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում տրական հոլովը, որպես հնաբանություն, կարող է կազմվել նաև արտաքին թեքման ՅԱՆ||ԵԱՆ ձևով, ինչպես՝ ծնունդ—ծննդյան||ծննդեան, գալուստ—գալստյան||գալստեան, փախուստ—փախստյան (արևելահ.), կորուստ—կորսյան (արևելահ.), հանգիստ—հանգստյան (արևելահ.), ժողովուրդ—ժողովրդեան (արևմտահ.):

Արևելահայերենում Ե ներքին թեքմամբ տրական հոլով կարող են կազմել դուստր—դստեր և կայսր—կայսեր բառերը, սակայն դրանց համար սովորականն ու տարածվածը Ի հոլովումն է՝ դուստրի, կայսրի:

Հոգնակի հոլովում

Հոգնակի հոլովման մեջ արևելահայերենը և արևմտահայերենը ունեն մեկ հիմնական տարբերություն: Առաջինում ԵՐ և ՆԵՐ ձևերով կազմված հոգնակիները տրական հոլովը կազմվում է Ի, իսկ երկրորդում՝ ՈՒ վերջավորությամբ: Մյուս հոլովները արևելահայերենում կազմվում են ԻՅ, ՈՎ, ՈՒՄ, իսկ արևմտահայերենում՝ է, ՈՎ վերջավորություններով, որոնք դրվում են ուղղականի վրա: Հոլովման ընդհանուր պատկերը հետևյալն է:

Արևելահայերեն		Արևմտահայերեն		
Ուղղ.	սարեր	աշակերտներ	սարեր	աշակերտներ
Տր.	սարերի	աշակերտների	սարերու	աշակերտներու
Բաց.	սարերից	աշակերտներից	սարերէ	աշակերտներէ
Գործ.	սարերով	աշակերտներով	սարերով	աշակերտներով
Ներգ.	սարերում	աշակերտներում		

Արևելահայերենում ԵՆՔ, ԱՆՔ, ՈՆՔ, ՈՒՆՔ ածանցներով կազմված հավաքական հոգնակի գոյականները, որոնք ցույց են տալիս ազգ, տոհմ, խումբակցություն, սրական հոլով են կազմում Ք||Յ հերթագայությունամբ, օրինակ՝ Գրիգորեմբ—Գրիգորենց, Վարդանեմբ—Վարդանեց, Վանդունբ—Վանդուց և այլն: Սրանց բացառական և գործիական հոլովները կազմվում են տրականից՝ ԻՅ և ՈՎ վերջավորություններով: Այս ածանցներով կազմված բառերը արևմտահայերենում, որպես կանոն, գործածական չեն:

Սակայն արևմտահայերենում ևս կան Յ հոլովման բառեր: Դրանք այն բառերն են, որոնց հոգնակի թիվը կազմվում է Ք մասնիկով, օրինակ՝ Ռշտունիք—Ռշտունեաց, Արշակունիք—Արշակունեաց, Օսմանեանք—Օսմանեանց, պետութիւնք—պետութեանց և այլն: Այսպիսի ձևերը փաստորեն փոխառյալ են գրաբարից և հնաբանությունների արժեք ունեն:

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՂԵՐԸ

Երկու գրական լեզուներում էլ գործածական են Ս, Դ, Ն||Ը հոգերը: Դրանք արտահայտում են որոշյալություն, ստացականություն, դիմորոշություն ու ցուցականություն, և ըստ իրենց արտահայտած այդ տարբեր իմաստների կոչվում են որոշիչ, ստացական, դիմորոշ և ցուցական հոդեր:

Հայերենի որոշիչ հոգերն են Ը և Ն: Դրանք իրարից իմաստով շեն տարբերվում, այլ տարբերվում են միայն գործածության ոլորտով: Ինչպես գիտենք, արևելահայերենում Ն են ստանում ձայնավորով, իսկ Ը՝ բաղաձայնով վերջացող բառերը, ինչպես՝ քամին, առու, որդին, հայրենիք, մաղկ, քաղաք և այլն: Ն հոգը կարող է գործածվել նաև բաղաձայնով վերջացող բառերի հետ, երբ նրանց հաջորդում են ձայնավորով սկսվող բառեր, օրինակ՝ Ուսուցիչն ասաց. Արամն ուշացավ. Ամառն անցավ և այլն:

Արևմտահայերենում ևս, որպես կանոն, Ն են ստանում ձայնավորով, իսկ Ը՝ բաղաձայնով վերջացող բառերը, օրինակ՝ որդին, առու, տուն, գետ և այլն: Երբ շարտասանվող Յ-ով վերջացող բառերի վրա դրվում է Ն հոգը, Յ-ն ընկնում է, օրինակ՝ արքայ-արքան, երեխայ-երեխան և այլն:

Ը, Ն հոգերի գործածության տեսակետից արևմտահայ գրական լեզուն երևան է հանում այն առանձնահատկությունը, որ վերջինումս խոսքաշարում բաղաձայնով վերջացող բառերը Ն հոգը կարող են ստանալ ոչ միայն այն դեպքում, երբ հաջորդ բառն սկսվում է ձայնավորով, ինչպես՝ Ուսուցիչն ասաց, Արամն ուշացավ. Ամառն անցավ և այլն, այլև այն դեպքում, երբ հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով, օրինակ՝ Կարող է անոր քսակն գրպանէն հանել. Մատուցած ծառայություններն զինքն շատ սիրելի ըրած են ազգայիններուն. Գրախնդին հարցուց զինքն. Կը մտածէր պատրիարքարանն ու երեսփոխանական ժողովն Կարին փոխադրելու. Ընթերցողն կը շուարի և այլն: Ն որոշիչ հոգի այսպիսի ընդարձակ գործածությամբ արևմտահայ գրական լեզուն մոտենում է գրաբարին, որտեղ Ը հոգն ընդհանրապես գոյություն չունի, և բաղաձայնով վերջացող բառերը ևս ստանում էին Ն հոգը, ինչպես՝ բանն, խօսքն, թագաւորն և այլն:

Բացի այս տարբերությունից, որոշիչ հոգերի գործածության տեսակետից արևելահայերենն ու արևմտահայերենը երևան են հանում նաև այլ տարբերություններ. որոնք կարելի է ամփոփել հետևյալ կետերում:

1. Արևելահայերենում որոշյալ առման դեպքում որոշիչ հոգեր են ստանում միայն ուղղական և տրական հոլովները, իսկ բացառական, գործիական և ներգոյական հոլովները, որպես կանոն, շեն ստանում, թեև մինչև 19-րդ դարի վերջերը արևելահայ գրական լեզվում Արարատյան բարբառի ազդեցությամբ այդ հոլովները ևս կարող էին որոշիչ հոգեր ստանալ:

Արևմտահայերենում որոշիչ հոգեր են ստանում բոլոր հոլովները, այսինքն՝ ուղղական, տրական, բացառական և գործիական հոլովները, թեև որոշյալ առման դեպքում գործիականի հոդաուսությունը պարտադիր չէ:

Ըստ այդմ, գոյականների հոլովումը որոշիչ հոգերով երկու գրական լեզուներում ունի հետևյալ պատկերը:

Արևելահայերեն

Արևմտահայերեն

Ծղակի

Ուղղ.	քաղաքը	քաղաքը
Տր.	քաղաքին	քաղաքին
Բաց.	քաղաքից	քաղաքէն
Գործ.	քաղաքով	քաղաքով(ը)
Ներգ.	հաղաքում	—

Ուղղ.	որդին	որդին
Տր.	որդուն	որդիին
Բաց.	որդուց	որդիէն
Գործ	որդով	որդիով

Հոգնակի

Ուղղ.	քաղաքները	քաղաքները
Տր.	քաղաքներին	քաղաքներուն
Բաց.	քաղաքներից	քաղաքներիէն
Գործ.	քաղաքներով	քաղաքներով(ը)
Ներգ.	քաղաքներում	—

Ուղղ.	որդիները	որդիները
Տր.	որդիներին	որդիներուն
Բաց.	որդիներից	որդիներիէն
Գործ.	որդիներով	որդիներով(ը)
Ներգ	որդիներում	—

2. Արևելահայերենում տրական հոլովը հատկացուցչի պաշտոնում որոշիչ հոգ ստանալ չի կարող, իսկ արևմտահայերենում ստանում է: Օրինակներ.

Արևելահայերեն

Արևմտահայերեն

Մեր դպրոցի գրադարանը:

Մեր դպրոցին գրադարանը:

Այս ծառի ճյուղերը:

Այս ծառին ճիւղերը:

Մյուս փողոցի լույսերը:

Միւս փողոցին լույսերը:

Այդ գրքի նկարները:

Այդ գիրքին նկարները:

3. Արևելահայերենում անձերի հատուկ անունները գործածվում են որոշիչ հոգով, իսկ արևմտահայերենում, հատկապես պատմականները, կարող են նաև առանց որոշիչ հոգի գործածվել: Օրինակներ.

Արևելահայերեն

Արևմտահայերեն

Հրաշյա Աճառյանը բնիկ պոլսեցի է:
Գրիգոր Արծրունին ծնվել է Մոսկվայում,
1845 թվականին:

Հրաշեայ Աճառեան բնիկ պոլսեցի է:
Գրիգոր Արծրունի ծնած է Մոսկուա,
1845 թուականին:

Սահակը շարունակում է իր
գերմարդկային ճիգերը:
Խորենը հասավ Վենետիկ ու
վանահորը ներկայացավ:

Սահակ կը շարունակէ իր
գերմարդկային ճիգերը:
Խորեն հասաւ Վենետիկ ու
վանահօրը ներկայացաւ:

Անձի հատուկ անունների անհոգ գործածությամբ արևմտահայ գրական լեզուն համահնչյուն է գրաբարին, որտեղ դրանք առանց որոշիչ հոգի ևս կարող էին կիրառվել:

Հայերենի Ս, Դ, Ն հոդերը (գրաբարում Ը հոդը չի եղել) առաջացած լինելով ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ դերանուններից՝ շփման եղրեր ունեն այս դերանունների իմաստային ու կիրառական առանձնահատկությունների հետ: Գրաբարում Ս, Դ, Ն հոդերը, որպես կանոն, արտահայտել են ցուցական իմաստ՝ ցույց տալով, թե տվյալ առարկան ի՞նչ տարածական հարաբերություն ունի առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի հետ, ըստ որում, Ս հոդը ցույց է տալիս, որ առարկան առաջին դեմքին մոտ է կամ մտածվում է առաջին դեմքին մոտ, Դ հոդը ցույց է տալիս, որ առարկան երկրորդ դեմքի մոտ է կամ մտածվում է նրան մոտ, իսկ Ն հոդը ցույց է տալիս, որ առարկան մոտ է երրորդ դեմքին կամ նրան մոտ է մտածվում, օրինակ՝ ՄատեանՍ գեղեցիկ է (մատյանը, որ ինձ մոտ է), ՄատեանԴ գեղեցիկ է (մատյանը, որ քեզ մոտ է), ՄատեանՆ գեղեցիկ է (մատյանը, որ նրա մոտ է): Նույն ձևով էլ՝ պատանիՍ—այս պատանին, պատանիԴ—այդ պատանին, պատանիՆ—այն պատանին. ամբոխՍ—այս ամբոխը, ամբոխԴ—այդ ամբոխը, ամբոխՆ—այն ամբոխը և այլն:

Հայերենի հետագա պատմական զարգացման ընթացքում հոդերի դերը փոխվել է, և հայերենի բարբառներում, հետևաբար նաև արևելահայ ու արևմրտահայ գրական լեզուներում նրանք հիմնականում ձեռք են բերել ստացական իմաստ:

Ս, Դ, Ն հոդերից սկզբնական՝ ցուցական, ֆունկցիայով ժամանակակից լեզվում գործածվում է միայն Ս-ն, այն էլ որոշակի բառերի հետ և որոշակի կապակցություններում, օրինակ՝ «Վերջերս հիվանդ էր». «Օրերս հանդիպեցի նրան». «Առաջիններս հոգնակի թիվ են կազմում ծՐ, իսկ վերջիններս՝ ՆԾՐ մասնիկով» և այլն:

Հայերենի հետագա պատմական զարգացման ընթացքում գրաբարյան հոդերի իմաստը փոխվել է, և նրանք երկու գրական լեզուներում էլ հիմնականում ցույց են տալիս պատկանելություն՝ ԻՄ, ՔՈ, ԻՐ||ՆՐԱ դերանունների իմաստով, և այդ դեպքում կոչվում են ստացական հոդեր: Դրանք դրվում են եզակի և հոգնակի բառաձևերի վրա, ինչպես՝ շոբս—իմ շոբր, շոբեսս—իմ շոբեր, շոբդ—մո շոբր, շոբերդ—մո շոբեր և այլն: Ը||Ն հոդերը ստացական իմաստով հազվադեպ են գործածվում. դրանք արտահայտում են բառերի որոշյալ առումը:

Հայերենն ունի նաև հոգնակի ստացական իմաստ արտահայտող ձևեր: Արևելահայերենում դրանք կազմվում են հատկապես միավանկ բառերից, որոնք այդ դեպքում ստանում են ոչ թե ծՐ, այլ ՆԾՐ հոգնակերտը, որի վրա ավելանում են ստացական հոդերը: Ն մասնիկն այդ դեպքում ցույց է տալիս ստացական հոդի հոգնակիությունը, ինչպես՝ շոբեսս—իմ շոբեր, շոբներս—մեր շոբեր, շոբերդ—մո շոբեր, շոբներդ—ձեր շոբեր, շոբեր—նրա շոբեր, շոբներ—նրանց շոբեր. տներս—մեր տներ, տներդ—ձեր տներ, տներ—նրանց տներ: Դրանք կարող են նշանակել նաև մեր տունը, ձեր տունը, նրանց տունը:

Արևմտահայերենում ստացական հոգնակիներ են կազմվում ՆԻՍ, ՆԻԴ, ՆԻՆ ձևերով, որոնք կարող են դրվել ծՐ և ՆԾՐ ձևերով կազմված հոգնակի բառաձևերի վրա, ինչպես՝ գիրբերնիս, գիրբերնիդ, գիրբերնին—մեր գրբեր, ձեր գրբեր, իրենց գրբեր. շոբերնիս, շոբերնիդ, շոբերնին. տուներնիս, տուներնիդ, տուներնին. գալաթնիս, գալաթնիդ, գալաթնին և այլն: Այս ձևերը կարող են նշանակել նաև մեր գիրբը, ձեր գիրբը, իրենց գիրբը և այլն:

Պետք է նշել նաև այն, որ միավանկ բառերը միայն մեկ ձևով կարելի է ստացական հոգնակիի վերածել, ինչպես՝ տուներնիս, գիրբերնիս, շոբերնիս (գործածական չեն տուննիս, գիրբնիս, շոբնիս), իսկ բազմավանկ բառերը

ստացական հոգնակիի են վերածվում երկու ձևով, օրինակ՝ գրիչնիս||գրիչներ-
նիս, գաւաթնիս||գաւաթներնիս, մատիտնիս||մատիտներնիս և այլն:

Արևմտահայերենում ստացական հոգնակի:ները հասուկ հոլովում ունեն՝
հետևյալ ձևով:

Ուղղ.	գրիչնիս գրիչներնիս
Տր.	գրիչնուս գրիչներնուս
Իաց.	գրիչնէս գրիչներնէս
Գործ.	գրիչովնիս գրիչներովնիս

Նույն կաղապարով են հոլովվում նաև գրիչնիդ||գրիչներնիդ, գրչնից||գրիչ-
ներնից ձևերը:

Ինչպես կարելի է նկատել, ստացական հոգնակիների ընդգրկման ոլորտի
և կազմութեան ձևի տեսակետից արևելահայերենը և արևմտահայերենը որո-
շակիորեն տարբերվում են: Այդ տարբերությունները ևս, ինչպես այլ դեպքե-
րում է, գալիս են նրանց բարբառային հիմքերից:

Որպես՝ առանձնահատկություն պետք է նշել նաև այն, որ արևելահայերե-
նում, որպես կանոն, ստացական հոգը և ստացական դերանունը միաժամա-
նակ չեն կարու գործածվել, իսկ արևմտահայերենում՝ գործածվում են, ինչ-
պես՝ իմ գիրքս, էու գիրքդ, իմ ժամացոյցս, էու ժամացոյցդ, իմ գիրքերս, իմ
ժամացոյցներս և այլն:

Հայտնի է, որ արևելահայ գրական լեզվում ստացական հոգնակիի ձևերը
այնքան էլ դործածական չեն և խոսքին տալիս են խոսակցական-բարբառային
երանգ: Նույն երևույթն է նկատվում նաև արևմտահայ գրական լեզվում: Արե-
մտահայերենի քերականություններում արձանագրվում է, որ ստացական հոգ-
նակիի ձևերը այնքան էլ հանձնարարելի չեն: «Նախապատիւ է միշտ դործածել
քերականական միւս ձևերը, ինչպես՝ մեր տունը, ձեր գրիչը, ձեր տետրակները
են, փոխանակ՝ տուներնիս, գրիչնիդ, տետրակներնիդ և այլնի»¹:

Հայերենի հոգերը ցույց են տալիս նաև դեմք և այդ դեպքում կոչվում են
դիմորոշ: Դիմորոշ հոգերի հետ սովորաբար գործածվում են նաև նույն դեմքի
անձնական դերանունները: Ս հոգն արտահայտում է առաջին դեմքի գաղա-
փար կամ իմաստ, Ե հոգը՝ երկրորդ դեմքի իմաստ, իսկ Ն||Ը հոգերը գործած-
վում են ինքնին երրորդ դեմքի իմաստ արտահայտող բառերի հետ:

Դիմորոշ հոգերի կիրառության տեսակետից արևելահայերենը և արևմտա-
հայերենը տարբերություններ երևան չեն հանում՝ օրինակ՝ Ծս հայրենիքի զին-
վորս, կատարում եմ իմ պարտքը||Ծս՝ հայրենիքին զինուորս, կը կատարեմ իմ
պարտքը, Մենե՛՛ աշակերտներս, մեր գիտելիքներով պարտական ենք ձեզ՝ ու-
սուցիչներիդ||Մենե՛՛՛ աշակերտներս, չեք գիտելիքներովը պարտինք ձեզի՛՛՛ ու-
սուցիչներուդ:

Բացի Ս, Դ, Ն||Ը հոգերից հայոց լեզուն ունի նաև անորոշ հոգ, որն արե-
վելահայերենում ՄԻ, իսկ արևմտահայերենում ՄԸ ձևն ունի, օրինակ՝ արևե-
լահայերեն— մի տուն, մի ուսանող, մի մարդ. արևմտահայերեն— տուն մը,
ուսանող մը, մարդ մը:

Ինչպես կարելի է նկատել, բացի ձևային տարբերությունից, ՄԻ և ՄԸ հո-
գերը տարբերվում են նաև դիրքով: Արևելահայերենի ՄԻ հոգն ունի նախա-
դաս, իսկ արևմտահայերենի ՄԸ հոգը՝ հետադաս կիրառություն:

Մյուս կողմից՝ ԾՄ էական բայից ու ԱԼ շաղկապից առաջ ՄԸ հոգին ավե-
լանում է Ն, և այն դառնում է ՄԸՆ, իսկ ձայնավորով սկսվող բառերից առաջ

¹ Յովհ. Փազանճեան, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1924, էջ
169:

ՄԸ հոդի Ը-ն սովորաբար սղվում է, և Մ-ն գրվում է հաջորդ բառին կից՝ նրա
րանից բաժանվելով ապաթարցով:

Ստորև զուգահեռաբար բերվում են ՄԻ և ՄԸ հոդերի կիրառության օրի-
նակներ:

Արևելահայերեն

Արևմտահայերեն

Մի պատանի ներս մտավ և մի
նամակ հանձնեց տիկնոջը:

Պատանի մը ներս մտաւ և նամակ մը
յանձնեց տիկնոջ:

Գարնանային մի երեկո դուրս
եկա տնից:

Գարնանային երեկոյ մը դուրս
ելա տունէն:

Քեզ հետ մի փոքր գրոյց ունեմ:

Քեզի հետ պզտիկ գրոյց մ'ունիմ:

Հարկ է մի փոխառութիւն անել:

Հարկ է փոխառութիւն մ'ընել:

Նա հիսունն անց մի մարդուկ է:

Ան յիսունն անց մարդուկ մըն է:

Ամփոփելով՝ կրկին անգամ նշենք, որ արևելահայերենի և արևմտահա-
յերենի այս և այլ ձևաբանական զուգաբանությունները գերազանցապես ար-
դյունք են նրանց բարբառային տարբեր հիմքերի:

М. Е. АСАТРЯН—Морфологические признаки западноармянского и восточноармянского языков.— Западноармянский и восточноармянский, будучи взаимопонятными языками, что свидетельствует об общности их истоков, одновременно проявляют определенные лексические, фонетические и морфологические различия, которые главным образом объясняются диалектическими основами наших двух литературных языков (Араратский и Константинопольский диалекты), а частично и разным влиянием грабара на их обработку. В статье представляются параллели падежей и склонений, артиклей существительного в западноармянском и восточноармянском языках.